

**Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր**  
**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ք.Վանաձոր

« 14 » հունվար 2022թ.

«Իգոր Մուրադյանի քաղաքական և գիտական ժառանգության» հիմնադրամը, ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ռաֆիկ Հովակիմյանի, մի կողմից, և ՀՀ Լոռու մարզպետարանը՝ ի դեմս ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանի, մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

**1. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Կողմերը կաջակցեն.

1.1. «Իգոր Մուրադյանի քաղաքական և գիտական ժառանգության» հիմնադրամի կողմից կազմակերպվող տեխնոլոգիական կրթության զարգացում ծրագրի իրագործմանը, որը կիրականացվի ՀՀ Լոռու մարզի Տաշիր և Օձուն համայնքներում 01.03.2022թ. - 01.03.2027թ.:

1.2. «Իգոր Մուրադյանի քաղաքական և գիտական ժառանգության» հիմնադրամի կողմից ինժեներական խմբակների ուսումնական ծրագրի ներդրմանը՝ վերը նշված համայնքներում՝ 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

1.3. Նախագծի իրականացմանը, համապատասխան մեթոդաբանության մշակմանը, ենթակառուցվածքի ստեղծմանը և բարձրորակ դասավանդող անձնակազմի ներգրավմանը:

**2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ**

2.1. Հուշագրի գործողության ողջ ժամանակահատվածում, կոնկրետ ծրագրերի իրականացման ընթացքում առաջացած բոլոր հարցերը Կողմերի միջև լուծվում են բանակցությունների միջոցով:

2.2. Միջոցառումների լուսաբանումը ՋԼՄ-ներում և գովազդային փաթեթները թողարկվում են Կողմերի տարբերանշաններով և նախապես համաձայնեցվում են Կողմերի միջև:

**3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

3.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

3.2. Հուշագրի գործողության դադարեցումը չի առաջացնի Կողմերի միջև կնքված այլ պայմանագրերի և (կամ) համաձայնագրերի գործողության դադարեցում:

3.3. Հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար և հավասարազոր իրավական ուժ ունի:

«Իգոր Մուրադյանի քաղաքական և գիտական ժառանգության» հիմնադրամ  
Հասցե՝ 0026, ք. Երևան, Արշակունյաց պող.,  
531/33, բն. 42

Էլ. փոստ՝ 00074101 447 913, (+374 77) 255 250



*[Handwritten signature]*  
Ռաֆիկ Հովակիմյան

ՀՀ Լոռու մարզպետարան

Հասցե՝ 2001, ք. Վանաձոր,  
Հայրի հրապարակ  
Հեռ.՝ (0322) 4 61 92

Մ ա ր գ ա յ ն ա ռ



*[Handwritten signature]*  
Արամ Խաչատրյան